գները, ազդելով նաեւ Բաքուի կերոսինի գների վրայ։

Բաքուի կերոսինի մեծագոյն մասը ուղարկուում է Անգլիա, այսպէս օրինակ ներկայ թուականի յուլիս ամսում Լոնդոն և Անգլիայի միւս նաւահանգիստները ուղարկուել է 74,795 տակառ կամ մօտ 747 հազար պուդ, մինչդեռ Եւրոպայի միւս նաւահանգիստները ուղարկուել է միայն 39,330 տակառ կամ մօտ 393 հազար պուդ։

Լոնդոնում Բաքուի կերոսինի գներն էին իւր ժամանակւայ թղթադրամի կուրսի համաձայն յունվարին 87,87 կոպ. պուդը, մայիսին 73,25 կոպ. յունիսին 70 կոպ. յուլիսին 73,06 օգոստոսին 80,03, սեպտեմբերին 70,05 կոպ.

Ներկայ տարւայ ութ ամիսներում Բաքուն տուեց ընդ ամենը 190 միլիոն պուդ նաւթ։ Դուրս հակառակ Ամերիկան, բացի իւր արտահանած կերոսինից, առ մէկն սեպտեմ. ունէր նաւթամբարներում 318,431,000 պուդ նաւթ։

Բանող հորերի թիւն էր ներկայ տարում յունվարին 242, իսկ սեպտեմ. 286։

Աւելացնենք վերջապէս, որ նաւթագործարանատէրերը օրինակելով ամերիկականին Stantart կոչուած միութիւնը վերջերքս սինդիկատ են ուզում կազմել»։

Այս նաւթը մաքրող Բաքուի գործարաններն՝ որ Սեւ քաղաք անունով թաղումն են, ստանալով Բալախանից ընդ երկրայ, չուգունի խողովակներով նաւթը՝ գտում և մաքրում են և այնպէս ուղարկում այլեւայլ աշխարհներ ի վաճառ։

Այս նաւթահանքերի մօտ՝ 5 վերստ հեռու գտնվում են ինքնավառ հրաբուխներ, Սուրախանի ասուած տեղումն, ուր երբեմն կրակապաշտներն են Հնդկաստանից եկած և մինչեւ վերջին տարիներս՝ Բաքուի բազմամարդանալը և շէնանալը մընացել են այն տեղ, ուր և մնացել է նրանց յիշատակը մի շէնք քառակուսի բարձր՝ նման մեր եկեղեցեաց զանգակատան, ուր մշտավառ անշէջ կրակն էին պահում և պաշտում։ Կրակը հողի